Այսպէս 'ի ձախ թեւ։

Եւ այսպէս համարելով մինչև որքան անձինք որ լինիցին զի հրաւիրեալք անձինք առաջագոյն ծանիցեն աստիճան բազմենալոյ իւրաքանչիւրոց 'ի վերայ սեղանի զի մի գայթակղեսցեն, ոչ ոք մի յանդգնեսցի յիշխել նստուցանել զինքն 'ի տեղի այլոց, այսպէս յառաջ քան զխոստանալն իւրաքանչիւրօք մտանել 'ի տեղի հրաւիրեցեալ տան, երկայնամիտ լինելով եթէ հաճեսցի կամացն իւր նոյն կարգաւ բազմիլ 'ի սեղան երթիցէ, և եթէ գոցի անպատուութիւն ինչ 'ի աստիճանի իւրոյ, ներուցին խնդրելով հրաժարեսցի. այսպէս լինիցի սահման 'ի վերայ բամբշաց և տիկնոց եթէ բազմիլ 'ի սեղան և եթէ 'ի յոտս կալ առ 'ի կաքաւ, և ոչ ոք յիշխան և հասարակ այր բամբուշ և հասարակ տիկին որ 'ի տան հրաւիրեալ մի գոցի, հարբեալ և անպատեհ շարժեալ, և բանալ բերանս իւր համարձակ, և եթէ գուցէ այսպիսի անպատեհ շարժող առն այն եթէ այր և եթէ կին ով ոք որ իցէ՝ ոչ ոք կրկին հրաւիրեսցի նմայ 'ի հանդէս և եթէ 'ի պատճառէ ընտանեակցութենէ հրաւիրողի հարկեսցի ումեք հրաւիրել, այլ հրաւիրեալքն ամենայն խոյս տացեն և ներողութիւն խնդրեսցեն և ոչ ոք մտցէ 'ի հանդէսն որում աղմկողն հրաւիրեալ գոցի։